Հայաստանի Ոսկեհանքը

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

ԵՐԵՒԱՆԻ «Գիտական տեղեկագրում» կայ եւ մի յօդուած հայ անցեալին վերաբերեալ, բաւականին մեծաբան վերնագրով՝ «Յոյն պատմիչների վկայութիւնը հին Հայաստանի ոսկեհանքերի եւ նրանց տեղի մասին. տեղագրական ուսումնասիրութիւն»:

Յօդուածը պատկանում է պ. Ա. Խաչատրեանին, Սանասարեան դպրոցի նախկին ուսուցիչներից մէկին, որով հասկանալի է գրութեան վարժապետական եւ վարդապետական չեշտը, որ թերեւս տաղում է երկարամեայ դասատուին:

Յօդուածի ճակատը զարդարուած է խրատաբանական քանդակով, առնուած Վալդեմար Բելկից, որի միտքն է թէ «առանց ընդհանուր աշխարհագրական աղերսները դիտելու» եւ «առանց տեղական մասնաւոր յարաբերութիւնները ճշդելու» մարդ չի կարող արդիւնաւոր լինել աշխարհագրական խնդիրներում:

Մեծ իմաստութիւն չէ, հարկաւ: Բայց մխիթարական գոնէ կարծել, որ պ. Խաչատրեան իւրացրել է այս իմաստութիւնը. եւ ուրեմն կարելի է յուսալ, որ տեղի վրայ կատարած ուսումնասիրութիւն ունի եւ այդ ուսումնասիրութեամբ յաջողել է վանել հայ բանասիրութեան երեսից ինչ ինչ աշխարհագրական կնճիռներ:

Յօդուածի մեծ վերնագիրը չպիտի չփոթէ ընթերցողին: Խօսքը միայն երկու յոյն պատմիչի մասին է, Ստրաբոն եւ Պրոկոպ. եւ սրանց վկայութիւնն էլ մեծ բան չէ, գրեթէ einsilbig, ինչպէս կ'ասեն գերմանացիք: Ստրաբոն յիշում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին աչք է ունեցել Կաբալլայի ոսկեհանքի վրայ, որ գտնուում էր Սիսպիրիտի մէջ: Սիսպիրիտ հայ Սպեր գաւառն է եւ Կաբալլա այնտեղի անուն, ուր էր ոսկեհանքը նոյն գաւառում:

Աւստրիացի դպրոցական մի ուսուցիչ, Մոնցկա անունով, այն միտքն է յայտնել, թէ Սիսպիրիտ որոնելու է Հայաստանի հարաւային սահմաններում, մեծ աշխարհակալի ճանապարհի մօտիկ: Մի անհատական կարծիք, անկարող խախտելու ինչ որ ընդունուած է:

Պ. Խաչատրեան մեծ աշխոյժով արշաւում է Մոնցկայի վրայ եւ, այն ինչ սպասւում է, որ «տեղագրական ուսումնասիրութեամբ» ջախջախէ իր հակառակորդին, ընդհակառակն նա նահանջում է, «մի աւելի կարեւոր առաջարկութիւն անելով ի նպաստ Մոնցկայի կարծիքի եւ համաձայն է, որ Սիսպիրիտ գտնուելու է Տիգրիսի աւազանում: Իսկ ոսկեհանքե՞րը: Ոչ, հանքերը թողնում է Սպերում, «մինչեւ որ չհաստատուի ոսկու հանքի գոյութիւնը» Տիգրիսի աւազանում:

Այսպէս է սկսում եւ այսպէս փակում յոյն պատմիչի վկայութեան քննութիւնը: Եւ այս կոչւում է «տեղագրական ուսումնասիրութիւն»:

Սակայն, երեւում է, որ պ. Խաչատրեանի ուսումնասիրութեան նիւթը խսկապէս Ստրաբոն չէ: Կաբալլայի ոսկու խնդիրը նա յարուցանում է որպէս մի մարզանք, մի տեսակ յեսան, ուր սրում է իր գիտական միտքը, որպէսզի աւելի յաջողութեամբ ճակատէ միւս պատմիչի վկայութեան շուրջը:

Պատմիչը Պրոկոպն է եւ Մոնցկայի դերում՝ մենք: Իր աշխատութիւնը վերջացնելուց յետոյ բաւականին ժամանակ է անցնում, եւ պ. Խաչատրեան խմանում է, որ նոյն խնդրով զբաղուել ենք եւ մենք: Դուրս է գալիս, որ «իրարից անկախ (մի՛տ առէք, քսանից աւելի տարի յառաջ գրածս անկախ նրանից) երկուքս էլ, ինչպէս յայտարարում է պ. Խաչատրեան, յանգել ենք երբեմն նոյն եզրակացութեան, չատ կէտերում էլ իրարից տարբերւում ենք»:

Արդոյ բանասէրը բերում է մեր բացատրութիւնները, քննում է, հակասութիւններ է գտնում, ջրում, հերքում եւ հետեւեալ դատակնիքն է արձակում.

«Հեղինակը չի կարողացել պատկերացնել տեղագրական պայմանները եւ արդէն առանց